

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսագանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ՊՐՈՖԻ ՎԱՐԿԵՐԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐ

Վարկավորման պայմաններ

1.	Վարկառու		Ֆիզիկական անձ հաճախորդներ, ովքեր աշխատավարձը ստանում են կամ նախատեսում են ստանալ Բանկում քարտի տրամադրումից հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում՝ անկախ կազմակերպության հետ համագործակցության պայմանագրի առկայությունից և կազմակերպության տեսակից:
2.	Վարկատեսակ		վարկ, վարկային գիծ
3.	Նվազագույն սահմանաչափ		300.000 ՀՀ դրամ
4.	Առավելագույն սահմանաչափ/գումար	Վարկ	զուտ աշխատավարձի ¹ տասնհինգապատիկը ²³ ՝ առավելագույնը 10.000.000 ՀՀ դրամ
		Վարկային գիծ	զուտ աշխատավարձի տասնապատիկը՝ առավելագույնը 10.000.000 ՀՀ դրամ
5.	Տարեկան անվանական տոկոսադրույք⁴	Վարկ	14% - 20%/համաձայն աղյուսակ 1-ի
		Վարկային գիծ	15% - 20%/համաձայն աղյուսակ 2-ի
6.	Տարեկան փաստացի տոկոսադրույք⁵	Վարկ	15.1% - 21.94%
		Վարկային գիծ	16.02% - 21.96%

¹ Պրոֆի վարկի/վարկային գծի դեպքում հնարավոր է որպես աշխատավարձ դիտարկել նաև աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտները, որոնք կրում են պարբերական բնույթ:

² Նշված սահմանաչափից առնվազն կրկնապատիկը տրամադրվում է Rocket line սահմանաչափի տեսքով: Վարկառուի բոլոր վարկերի հանրագումարը (այդ թվում՝ Rocket line սահմանաչափը) չպետք է գերազանցի զուտ եկամտի քսանապատիկը: Պարտավորությունների հանրագումարի մեջ չեն ներառվում անշարժ գույքի գրավով/գրավով ապահովված հիփոթեքային վարկերը, ոսկու գրավով, ավտոմեքենայի գրավով ՀՀ բանկերում առկա վարկերը և դրամական միջոցների գրավով ամբողջությամբ ապահովված վարկերը, իսկ մասնակի ապահովված վարկերը չեն ներառվում միայն ապահովված մասով: Վարկային գծերը պարտավորությունների հանրագումարի մեջ ներառվում են պայմանագրային գումարի չափով:

³ Հաճախորդին հասանելիք վարկի գումարը կարող է ավելանալ վարկի 20%-ի չափով, սակայն ոչ ավել, քան սույն պայմանների 4-րդ կետով սահմանված առավելագույն սահմանաչափերի/գումարների՝ հաճախորդի կողմից դժբախտ պատահարներից ապահովագրություն ձեռքբերելու ցանկության դեպքում:

⁴ Եթե հաճախորդը իր աշխատավարձը 2 ամիս անընդմեջ չի ստանում Բանկի միջոցով, ապա Բանկը կարող է վարկի/վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանել 21.7%:

⁵ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆՎԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Ե ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԿՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՅՈՒՄ:

7.	Նվազագույն ժամկետ		12 ամիս
8.	Առավելագույն ժամկետ	Վարկ	120 ամիս
		Վարկային գիծ	60 ամիս
9.	Տրամադրման եղանակ	Վարկ	անկանխիկ՝ ընթացիկ հաշվի կամ վճարային քարտի միջոցով
		Վարկային գիծ	անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով
10.	Վարկի մարման եղանակ		ամսական հավասարաչափ մասերով՝ անուիտետային
11.	Վարկային գծի ամսական մարման նվազագույն չափ		չի սահմանվում
12.	Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված		մինչև 55 օր նախորդ ամսվա ընթացքում վարկային գծի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, QR վճարումներ, ներքանկային և միջբանկային փոխանցումները ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև) տոկոսներ չեն հաշվարկվում, եթե հաճախորդը վարկային գծի օգտագործված մասի մարումը կատարի մինչև ընթացիկ ամսվա 25-ը
13.	Վարկային գծի չօգտագործված մասի դիմաց հաշվեգրվող տոկոսադրույք		0%
14.	Ապահովվածություն		դրամական հոսքեր
15.	Ապահովագրություն		Ոչ պարտադիր, մինչև 2 500 000 ՀՀ դրամ վարկերի դեպքում, վարկառուի ցանկությամբ իրականացվում է Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ԴՊ), մեկ տարի ժամկետով: Մնացած պայմանները՝ համաձայն REGO ԱՓԲԸ հետ համագործակցության պայմանների: Ապահովագրավճար – առանց ԴՊ ապահովագրության տարբերակի, հաճախորդին հասանելիք վարկի գումարի 10%-ի չափով, որը ներառվում է վարկի գումարի մեջ և փոխանցվում է ապահովագրական ընկերության համապատասխան հաշվեհամարին:
Միջնորդավճարներ			
16.	Հայտի ուսումնասիրության վճար		չի սահմանվում
17.	Վարկի/վարկային գծի տրամադրման և ամսական սպասարկման վճարներ		չի սահմանվում
18.	Հաշվի բացման վճար		համաձայն Բանկում գործող սակագների հետևյալ հղումով՝ Սակագներ
ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ			

Սույն պայմաններում տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկված է հաշվի առնելով IDsalary փաթեթի շրջանակում տրամադրվող վճարային քարտի սակագները: Այլ վճարային քարտով վարկ/վարկային գիծ ստանալու դեպքում նշված փաստացի տոկոսադրույքները կարող են փոփոխվել:

19.	Ժամկետանց վարկային պարտավորությունների (այդ թվում՝ տոկոսագումարների) գծով օրական տույժ, տուգանք	0.1%
20.	Վաղաժամկետ մարման տույժ	չի սահմանվում
Վարկառուի նկատմամբ պահանջներ		
21.	Կարգավիճակ	ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ
22.	Տարիքային սահմանափակում	վարկառուի տարիքը վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 19 տարեկանից պակաս լինի և մինչև վարկի մարման վերջնաժամկետը չպետք է գերազանցի 70 տարեկանը 21 տարեկանը չլրացած և 65 տարեկանը գերազանցելու դեպքում վարկի առավելագույն սահմանաչափ սահմանվում է զուտ աշխատավարձի կրկնապատիկը, ոչ ավել քան 1 միլիոն ՀՀ դրամ, իսկ տոկոսադրույքը՝ տվյալ պահին Բանկում գործող տոկոսադրույք +2% /համաձայն աղյուսակ 1 և 2/
23.	Վարկային պատմության նկատմամբ պահանջ (դրական վարկային պատմություն)	ա) վարկ ստանալու դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարկառուն չպետք է ունենա ժամկետանց /դասակարգված պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն), բ) դիմումի ընդունման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում (365 օր) վարկառուի ժամկետանց պարտավորությունների գծով օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը, կամ գ) դիմումի ընդունման օրվան նախորդող 5 տարվա ընթացքում (60 ամիս) վարկառուի ժամկետանց պարտավորությունների գծով օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 120 օր: Այս սահմանափակումը չի տարածվում այն հաճախորդների նկատմամբ, ովքեր ժամկետանց պարտավորությունները մարելուց հետո բոլոր վարկերը սպասարկել են համաձայն Բ կետի, ընդ որում վարկերից առնվազն մեկը սպասարկվել է նվազագույնը 12 ամիս: դ) վարկային պատմության բացակայություն ե) հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում⁶
Այլ պայմաններ		
24.	Վարկային գծի տրամադրման դրական գործոններ	1) դրական վարկային պատմությունը 2) դրամական հոսքերը

⁶ Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով- https://idbank.am/information/helpfull-information/Classification_procedure.pdf

25.	Վարկային գծի մերժման գործոններ	1) բացասական վարկային պատմությունը, 2) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից Բանկին տրամադրված/հայտարարված տեղեկությունները, 3) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, 4) դրամական հոսքերի ոչ բավարար մակարդակը, 5) հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայությունը 6) այլ հիմքեր
26.	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	պահանջվող բոլոր փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 1 աշխատանքային օր
27.	Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ	որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր Բանկը վարկի տրամադրման վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
28.	Որոշման վավերականության առավելագույն ժամկետ	15 աշխատանքային օր համաձայն սույն պայմանների 25-րդ կետում նշված հիմքերի Բանկն իրավասու է չտրամադրել հաստատված վարկը նաև որոշման վավերականության ընթացքում
29.	Վարկառուին վարկի գումարի տրամադրման ժամկետ	վարկային գծի պայմանագիրը ստորագրվելու օրը
30.	Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր
Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկ և տեղեկատվություն		
Վարկ/վարկային գիծ ստանալու դեպքում		
	1. հաճախորդի աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք և/կամ աշխատանքային պայմանագիր և/կամ բանկային հաշվի քաղվածք (անհրաժեշտության դեպքում) և/կամ Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոնից ստացված տեղեկատվություն: Հաճախորդը պետք է ունենա առնվազն 3 ամսվա աշխատանքային պատմություն:	
	2. հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցե	

	Աղյուսակ 1		
Վարկի ժամկետ (ամիս)	<=60	<=60	>60
Վարկային պարտավորությունների հանրագումար	<= զուտ աշխատավարձի տասնվեցապատիկ	<= զուտ աշխատավարձի քսանապատիկ	<= զուտ աշխատավարձի քսանապատիկ
Սահմանաչափ	<= զուտ աշխատավարձի տասնապատիկ	<=զուտ աշխատավարձի տասնհինգապատիկ	<= զուտ աշխատավարձի տասնհինգապատիկ

Անվանական տոկոսադրույք	14% - 15%	15% - 16%	17% - 18%
60 ամսից երկար ժամկետով տրամադրվող վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է լողացող 37-րդ ամսից սկսած և կազմում է $ԱԲՀS^6 + [7.7+8.7\%]$ 21 տարեկանը չըրացած և 65 տարեկանը գերազանցելու դեպքում վարկի տոկոսադրույքը սահմանվում է սույն աղյուսակի տոկոսադրույք +2%			
Նվազագույն տոկոսադրույքները սահմանվում են, եթե հաճախորդը հանդիսանում է. - Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպության աշխատակից - Պետական ոլորտում գործող կազմակերպության աշխատակից 1-ից 500 (ներառյալ) խոշոր հարկ վճարող կազմակերպության աշխատակից			

	Աղյուսակ 2	
Վարկային գծի ժամկետ (ամիս)	<=60	<=60
Վարկային պարտավորությունների հանրագումար	<= զուտ աշխատավարձի տասնվեցապատիկ	<= զուտ աշխատավարձի քսանապատիկ
Սահմանաչափ	<= զուտ աշխատավարձի վեցապատիկ	<= զուտ աշխատավարձի տասնապատիկ
Անվանական տոկոսադրույք	15% - 16%	17% - 18%
Նվազագույն տոկոսադրույքները սահմանվում են, եթե հաճախորդը հանդիսանում է. - Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպության աշխատակից - Պետական ոլորտում գործող կազմակերպության աշխատակից 1-ից 500 (ներառյալ) խոշոր հարկ վճարող կազմակերպության աշխատակից		

⁶ «Այդի Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույքը (ԱԲՀՏ) և հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալ [հղմամբ](#): Սույն պայմաններով տրամադրվող վարկերի համար ԱԲՀՏ-ն կարող է փոփոխվել տարեկան 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին: Ընդ որում, փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն հրապարակումից հետո 30 օրացուցային օր հետո: Վարկի տոկոսադրույքը կարող է բարձրանալ կամ նվազել առավելագույնը 4 տոկոսով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
- Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ [Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց](#):

8. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

9. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

10. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

11. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

12. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

13. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

14. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն՝ Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու, ինչպես նաև՝ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված կարգով օտարերկրյա հարկային ռեզիդենտ հանդիսացող հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ՊԵԿ տրամադրելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

15. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

16. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ [Սակագներ](#):

17. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Մասնաճյուղեր և բանկոմատներ](#):

18. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և [Idram](#) բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են [«Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»](#):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ